Հայաստանի բարձրագույն կրթության Նորարարությունների մրցակցային հիմնադրամի շրջանակներում դրամաշնորհային ծրագրերի իրականացման ընթացքում երաժշտագիտության ուղղությամբ մասնագիտական աջակցություն ցուցաբերելու նպատակով անհատ խորհրդատուի ընտրության մրցույթի հայտարարություն

Հայաստանի Հանրապետությունը Համաշխարհային բանկի Միջազգային զարգացման ընկերակցության համագործակցությամբ իրականացնում է «Կրթության բարելավում» վարկային ծրագիրը, որի շրջանակներում ընթացքի մեջ են Նորարարությունների մրցակցային հիմնադրամի (ՆՄՀ) զարգացման աշխատանքները: ՆՄՀ-ն բարձրագույն կրթության ոլորտում նորարարությունները խթանող մեխանիզմ է, որի միջոցով մրցակցային հիմունքներով դրամաշնորհներ են տրամադրվում ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում նորարարական ու զարգացման ծրագրերի իրականացման և բուհերի կարողությունների հզորացման նպատակով: Ներկայումս ընթացքում են ՆՄՀ իրականացման հավելյալ շրջափուլի դրամաշնորհային ծրագրերը: Այդ շրջանակներում Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի կողմից դրամաշնորհային ծրագրի իրականացման ընթացքում երաժշտագիտության ուղղությամբ անհրաժեշտ մասնագիտական խորհրդատվության տրամադրման համար (գնման ենթակա ապրանքների և ծառայությունների տեխնիկական բնութագրերի դիտարկում, տեխնիկական գնահատման համապատասխանության դիտարկում, մասնագիտական աջակցություն մշտադիտարկման ընթացքում) նախատեսվում է ներգրավել մեկ փորձագետի: Փորձագետի հիմնական պարտականությունները ներառում են հետևյալ աշխատանքները.

- Անհրաժեշտ մասնագիտական խորհրդատվության տրամադրում Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի ՆՄՀ դրամաշնորհային ծրագրի գնումների գործընթացի իրականացման ընթացքում, ներառյալ.
  - Գնման ենթակա ապրանքների տեխնիկական հատկորոշիչների դիտարկում և ներկայացված տեխնիկական առաջարկների/հայտերի ու պահանջված տեխնիկական հատկորոշիչների համապատասխանելիության գնահատման դիտարկում;
  - Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի ՆՄՀ դրամաշնորհային ծրագրի շրջանակներում խորհրդատուների ընտրության նպատակով կազմված աշխատանքային նկարագրերի դիտարկում:
- Անհրաժեշտ փորձագիտական եզրակացության տրամադրում Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի ՆՄՀ դրամաշնորհային ծրագրի շրջանակներում կնքված պայմանագրերի իրականացման ընթացքում, ներառյալ.
  - Մշտադիտարկման այցերի իրականացում դրամաշնորհառու բուհ;
  - Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի ՆՄՀ դրամաշնորհային ծրագրի իրականացման վերաբերյալ ընդհանուր մասնագիտական եզրակացության տրամադրում:

Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի ՆՄՀ դրամաշնորհային ծրագրի իրականացման ընթացքում երաժշտագիտության ուղղությամբ մասնագիտական աջակցություն ցուցաբերելու նպատակով անհատ խորհրդատուի որակավորման նվազագույն պահանջներն են.

Խորհրդատուի որակավորումը - (առավելագույնը 30 միավոր)

- Բարձրագույն կրթություն երաժշտագիտության ոլորտում
- Անգլերեն լեզվի իմացություն

Ընդհանուր աշխատանքային փորձը - (առավելագույնը 30 միավոր)

- Առնվազն 5 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ համապատասխան ոլորտում
- Միջազգային կազմակերպություններում աշխատանքային փորձը ցանկալի է

Աշխատանքային փորձի համապատասխանությունը ոլորտում - (առավելագույնը 40 միավոր)

- ՀՀ բարձրագույն կրթության համակարգի լավ իմացություն
- ՀԲ ֆինանսական/գնումների ընթացակարգերի իմացությունը ցանկալի է

Անհատ խորհրդատուի աշխատանքը նախատեսվում է իրականացնել 2017թ. մարտից 2018թ. հունվար ամիսների ընթացքում: Խորհրդատուի ընտրությունը կիրականացվի «Համաշխարհային բանկի վարկառուների կողմից խորհրդատուների ընտրության և վարձման ուղեցույցի» պայմանների համաձայն:

Հետաքրքրված թեկնածուները կարող են լրացուցիչ տեղեկատվություն ստանալ ներքոնշյալ հասցեով, երկուշաբթիից մինչև ուրբաթ (բացառությամբ տոն օրերի), հետևյալ աշխատանքային ժամերին՝ 11:00 մինչև 13:00 և 14:00 մինչև 17:00: Հետաքրքրված անձինք պետք է ներկայացնեն դիմում և մանրամասն ինքնակենսագրություն (Curriculum Vitae): Դիմումի ձևը կցվում է: Հետաքրքրվածության հայտը պետք է ներկայացվի ներքոնշյալ հասցեով կամ էլ-փոստով՝ մինչև 2017 թվականի մարտի 22-ի ժամը 18:00-ը ներառյալ:

«Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ

Ս. Վրացյան 73, Երևան 0070, Հայաստան

Հեռ: (374-10) 57-56-90, (27, 29, 50)

E-mail: cfep@arminco.com

Կայքի հասցե: www.cfep.am

ՀՀ ԿԳՆ «Կրթական ծրագրերի կենտրոն»

ծրագրերի իրականացման գրասենյակ ՊՀ

Հայաստանի Հանրապետություն, Երևան, Վրացյան 73

Դիմող՝ _____

_____

_____

Դիմում

Սույնով ցանկություն եմ հայտնում մասնակցել

_____

_____

_____:

Կից ներկայացնում եմ տվյալներ իմ աշխատանքային փորձի և կրթության մասին:

Դիմող՝ _____ /_____/

«____» _____ 2017 թ.